ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«05» հունիսի 2018 թվականի № 61-Ա

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 51-րդ հոդվածի, 54-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հիմք ընդունելով հանքավայրի շահագործման նախագծի 2018 թվականի ապրիլի 13-ի ՀՀ բնապահպանության նախարարության՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության» թիվ ԲՓ 32 և 2018 թվականի մարտի 16-ի ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության՝ «Արտադրական վտանգավոր օբյեկտի նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության» թիվ 634 փորձաքննությունների դրական եզրակացությունները, հաշվի առնելով «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի 2018թ. ապրիլի 19-ի թիվ Ֆ-137/18 գրությունը, «ՄԻԿՄԵՏԱԼ» ՓԲ ընկերության 2018թ. ապրիլի 13-ի թիվ 13 գրությունը և Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «Միկմետալ» ՓԲ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) 24.1 տարի ժամկետով տրամադրել օգտակար հանածոյի արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման թիվ ՇԱԹ-29/586 թույլտվությունը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրաբերի լիթոիդային պեմզաների հանքավայրի Լանջ տեղամասի 1.X=4469013. Y=8468721 2.X=4469082 Y=8468693 3.X=4469205 Y=8468691 4.X= 4469220 Y=8468722 5.X=4469239 Y=8468763 6.X=4469251 Y=8468800 7.X=4469254 Y=8468854 8.X=4469117 Y=8468893 (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով եզրագծված տարածքներում արդյունահանում կատարելու համար, հատկացնելով՝ 523.4 հազ. մ^3. լիթոիդային պեմզաների մարվող պաշար և լեռնահատկացման թիվ Լ-586 լեռնահատկացման ակտը՝ 1.X=4469013

Y=8468721, H=1700.0 (h=0), 2.X=4469046 Y=8468698, H=1678.0 (h=0), 3.X=4469054 Y=8468695, H=1660.0 (h=0), 4.X=4469082 Y=8468693, H=1666.0 (h=0), 5.X=4469093 Y=8468674, H=1670.0 (h=0), 6. X=4469123 Y=8468663, H=1670.0 (h=0), 7. X=4469142 Y=8468668 H=1672.0 (h=0), 8.X=4469149 Y=8468692, H=1674.0 (h=0), 9. X=4469205 Y=8468691, H=1672.0 (h=0), 10. X=4469220 Y=8468722 H=1670.0 (h=0) 11.X=4469239 Y=8468763 H=1676.0 (h=0) 12.X=4469251 Y=8468800 H=1676.0 (h=0), 13.X=4469254 Y=8468854 H=1674.0 (h=0), 14.X=4469117 Y=8468893 H=1690.0 (h=0) 15.X=4469013 Y=8468721 H=1714.0 (h=0) (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով եզրագծված 3.5 հա տարածքով:

2.Հանքի տարեկան արտադրողականությունը սահմանել՝ 20000 մ^3 լիթոիդային պեմզայի զանգված:

3.Կնքել օգտակար հանածոյի արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման նպատակով ընդերքօգտագործման թիվ Պ-586 պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր):

4. Ընդերքի գործակալության պետին՝

1) ծանուցել ընկերությանը՝ ոչ ուշ քան 5 աշխատանքային օրվա ընթացքում վճարել ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պետական տուրքը.

2) հրավիրել ընկերությանը 10-օրյա ժամկետում վավերացնելու (ստորագրելու և կնքելու) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրաբերի լիթոիդային պեմզաների հանքավայրի Լանջ տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման ընդերքօգտագործման թիվ Պ-586 պայմանագիրը.

3) ընկերության կողմից պայմանագիրը վավերացվելուց (ստորագրելուց և կնքելուց) հետո, 10 օրվա ընթացքում ընկերությանը տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման իրավունքը հավաստող փաստաթղթերի փաթեթը.

4) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագիրն իր կողմից չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փաթեթը չստանալու դեպքում, արդյունահանման իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած.

5) ապահովել համապատասխան գրառումների կատարումը օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

5. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին – ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

6. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

7. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել՝ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Վարդան Գևորգյանին:

ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ